Քաղաքականության համառոտագիր

Հայաստանի էներգետիկ ոլորտի մոտարկումը ՀԸԳՀ-ին եւ ԵՄ հրահանգներին

Ներածություն

Հայաստանի եւ Եվրոպական միության միջեւ 2021 թվականից ուժի մեջ մտած Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) սահմանում է Հայաստանի՝ իր էներգետիկ օրենսդրությունն ու շուկան ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու պարտավորությունը: Այն ներառում է առանցքային բարեփոխումներ էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի, շենքերի էներգաարդյունավետության, էներգետիկ շուկաների եւ միջուկային անվտանգության ոլորտներում: Այնուամենայնիվ, օրենսդրական մոտարկումը տարբեր ուղղություններում անհամաչափ է, իսկ ինստիտուցիոնալ եւ իրականացման զգալի բացերը շարունակում են խոչընդոտել Հայաստանի էներգետիկ անցմանը եւ ՀԸԳՀ-ի պահանջների լիարժեք կատարմանը:

Սույն քաղաքականության համառոտագիրը ներկայացնում է ՀԸԳՀ-ի էներգետիկ բաղադրիչին Հայաստանի համապատասխանությունը գնահատող մոնիթորինգի զեկույցի արդյունքները: Հետազոտությունը վերլուծում է ԵՄ հրահանգների հետ իրավական եւ ինստիտուցիոնալ մոտարկման ներկա վիճակը, մատնանշում է հիմնական գործնական խոչընդոտները եւ ներկայացնում է առաջարկություններ՝ ապացույցների վրա հիմնված քաղաքական բարեփոխումները խթանելու համար: Սույն համառոտագրի նպատակն է տեղեկացնել շահագրգիռ կողմերին, ուղղորդել ապագա օրենսդրական նախաձեռնությունները եւ ամրապնդել Հայաստանի ռազմավարական համապատասխանությունը ԵՄ էներգետիկ քաղաքականությանը, հատկապես՝ «Եվրոպական կանաչ գործարքի» եւ «Fit-for-55» փաթեթի համատեքստում:

Հիմնական բացահայտումներ

1. Իրավական մոտարկում.
   - Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել՝ ԵՄ հրահանգներին համապատասխանեցնելով վերականգնվող էներգետիկայի, էներգաարդյունավետության եւ շենքերի էներգետիկ ցուցանիշների վերաբերյալ իր օրենսդրությունը:
   - Գրեթե առաջընթաց չկա էկոդիզայնի եւ պիտակավորման ոլորտներում՝ ԵԱՏՄ կանոնակարգերի հետ հակասությունների պատճառով, եւ էլեկտրաէներգիայի

միջսահմանային (միջպետական) առեւտրի ոլորտում՝ շուկայի մեկուսացման պատճառով:

2. Ինստիտուցիոնալ եւ քաղաքականության բացեր.
   - Չնայած որոշ հիմնական հաստատությունների առկայությանը՝ դրանց լիազորությունները հստակ չեն, կիրառման կարողությունները թույլ են, եւ գերատեսչությունների միջեւ համագործակցությունը սահմանափակ է:
   - Բացակայում են առանցքային ռազմավարական գործիքներ՝ ինչպիսիք են շենքերի վերանորոգման երկարաժամկետ ռազմավարությունը, գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի (ԳԶԷՇ) ազգային ծրագիրը եւ էներգաարդյունավետության հավաստագրման գործուն համակարգը:
3. Էլեկտրաէներգիայի շուկայի բարեփոխում.
   - Հայաստանը 2022 թվականին մեկնարկեց էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացումը, սակայն կարգավորող շրջանակը դեռեւս ամբողջությամբ զարգացած չէ, ունի մրցակցային չեզոքություն ապահովող մեխանիզմների եւ վերականգնվող էներգետիկայի նոր հզորությունների խթանման գործիքների պակաս:
   - Հիմնական բացերից են ներօրյա (intraday) եւ հավասարակշռող շուկաների բացակայությունը, էլեկտրաէներգիայի կուտակման կարգավորման բացակայությունը եւ բաշխման ու համընդհանուր մատակարարման ոլորտի կենտրոնացումը մեկ օպերատորի ձեռքում:
4. Էներգետիկ աղքատություն եւ սոցիալական ներառում
   - ՀՀ օրենսդրությունում բացակայում են «էներգետիկ աղքատության» պաշտոնական սահմանումը եւ դրա չափման ցուցանիշները:
   - Գործող քաղաքականությունը նեղ իմաստով կողմնորոշված է դեպի «խոցելի սպառողները»՝ առանց անդրադառնալու ջերմային հարմարավետության կամ մատչելիության շեմերին:

Առաջարկություններ

1. Ռազմավարական շրջանակների ընդունում եւ իրականացում.
   - Մշակել, ընդունել եւ գործարկել Շենքերի վերանորոգման երկարաժամկետ ռազմավարությունը, Վերանորոգման միջոցառումների ծրագիրը եւ ԳԶԷՇ ճանապարհային քարտեզը:
   - Ապահովել, որ էլեկտրաէներգիայի շուկայի, վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության մասին սպասվող օրենսդրական փոփոխությունները համապատասխանեն ԵՄ հրահանգներին, մասնավորապես՝ վերանայված ՇԷԱՀ-ին (2024/1275) եւ ԷԱՀ-ին (2023/1791):
   - Էներգաարդյունավետության 2025-2027թթ. ազգային միջոցառումների ծրագրում (4-րդ ԷԱԱՄՇ) ներառել ԷԱՀ եւ ՇԷԱՀ պահանջները: Հաշվի առնելով

4-րդ ԷԱԱՄԾ ընդունման հետ կապված ուշացումները՝ դիտարկել դրա ժամկետի երկարաձգումը մինչեւ 2030թ.:

2. Ինստիտուցիոնալ համակարգման եւ կիրարկման ամրապնդում.
   - Հստակեցնել ՏԿԵՆ-ի, R2E2 հիմնադրամի, Արմստատի եւ Քաղաքաշինության կոմիտեի լիազորությունները եւ ամրապնդել դրանց կարողությունները: Հատկապես կարեւոր է ՏԿԵՆ-ի կարողությունների ամրապնդումը՝ էներգետիկ քաղաքականության ձեւավորման եւ կիրարկման ոլորտում:
   - Ստեղծել շենքերի էներգաարդյունավետության հավաստագրման հատուկ կառույցներ եւ գործարկել փորձաքննողների ու տեսուչների վերապատրաստման ծրագրեր:
3. Շուկայի եւ կարգավորման կառուցվածքի վերանայում.
   - Ընդունել «էլեկտրաէներգետիկայի մասին» եւ «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության մասին» նոր օրենքները՝ դրանցով փոխարինելով հնացած իրավական կարգավորումները եւ խթանելով շուկայի ազատականացումը:
   - Կարգավորել էներգիայի կուտակման, օր-առաջ առեւտրի եւ ներդնողների համար թափանցիկ արտոնագրման գործընթացները:
4. Սոցիալական քաղաքականության մեջ էներգետիկ աղքատության ինտեգրում.
   - Մշակել էներգետիկ աղքատության պաշտոնական սահմանում եւ մոնիթորինգի ցուցանիշներ:
   - Ստեղծել նպատակային աջակցության ծրագրեր, որոնք ուղղված են էներգիայի մատչելիությանը, հատկապես՝ ձմռան շրջանում ջերմության ապահովմանը:
5. Վերհանել եւ հարթել ԵԱՏՄ կանոնակարգերի հետ հակասությունները.
   - Նախաձեռնել տեխնիկական համեմատական վերլուծություն՝ ՀԸԳՀ-ից բխող պարտավորությունները եւ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը համադրելու համար, հատկապես՝ էկոդիզայնի եւ պիտակավորման ոլորտներում, որտեղ կարող են լինել էական համընկնումներ: Վերլուծության արդյունքներով պայմանավորված՝ դիտարկել ԵՄ էկոդիզայնի եւ պիտակավորման կանոնակարգերի համապատասխանեցման գործընթացի վերագործարկումը:

Սույն համառոտագիրը հիմնված է ՀԸԳՀ-ի էներգետիկային վերաբերող դրույթների մոնիթորինգի զեկույցի վրա:

Հեղինակ՝ Աստղինե Պասոյան | astghine@gmail.com

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Աստղինե Պասոյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: